ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 116

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-029-0050-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ՆԿՈՒՂԻ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ ԵՎ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Մարիկյանի դիմումը, 17.03.2020թ. կազմված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցամատյան 1233 , «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածովի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ որոշում եմ.

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0050-0003 ծածկագրում գտնվող 1006.1 քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0050-0003 ծածկագրի հողամասի մակերեսը 1006.1 քմ

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 1006.1 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Ցողիկ Գարեգինի Մարիկյանին 1/2 բաժնեմասով, Մարիկյան Սամվել Միհրի 1/4 բաժնեմասով, Մարիկյան Հասմիկ Գագիկի 1/4 բաժնեմասով և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան, նկուղի, բաց պատշգամբի և անասնագոմի նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրանց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:
3. Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0050-0003 ծածկագրում, այլ

անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ 1990թ. կառուցված՝ բնակելի տան 1-ին հարկի 112,74 քմ մակերեսով, 1990թ. կառուցված նկուղի 14,86 քմ մակերեսով, բաց պատշգամբի 22.09 քմ մակերեսով, 1980թ.-ին կառուցված 30.81 քմ անասնագոմի նկատմամբ ճանաչել նրաց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

4. Հողամասում առկա են 2015թ.-ին ինքնակամ կառուցված շինություններ՝ անասնագոմ 40.85 քմ մակերեսով, պարիսպ 1,7 քմ մակերեսով, պարիսպ 0,23 քմ մակերեսով:

5. Վերը նշված անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գյուղ Գյուլագարակ, 2-րդ փողոց, թիվ 10:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20<u>20</u> թ. <u>04</u> <u>07</u>

գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 Ապրիլի 2020թվականի N 117

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Շ. Հարությունյանի դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 17.09.2009 թ.-ի թիվ 1066-Ն որոշման 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 03.07.1997 թ.-ի թիվ 237-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, որոշում եմ՝

1. Քաղաքացու սեփականություն հանդիսացող 1.29723 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողի գործառնական նշանակությունը փոխել բազմամյա տնկարկներ գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 20 թ. 04 07
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 118

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, հիմք ընդունելով Սիրվեն Շահբազյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել Ա/Ձ Սիրվեն Շահբազյանի հայտը՝ Գյուլագարակ համայնքի Ամրակից բնակավայրի Կենտրոնական 59 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տրամադրելու մասին, ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան Սիրվեն Շահբազյան Ա/Ձ-ին տալ համայնքի տարածքում գովազդային վահանակների տեղադրման թույլտվություն 01.04.2020թ.-01.07.2020թ. ժամանակահատվածի համար:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ. 04 07
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 119

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿԱՆ ՍԵՂՄՎԱԾ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Գյուլագարակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկեմբերի 26-ի թիվ 92-Ն որոշման 4-րդ կետի պահանջը և հաշվի առնելով ԱՁ Սիրվեն Շահբազյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղում գործող Ա/Ձ-ի գործադիր տնօրեն Սիրվեն Շահբազյանի հայտը, նրան տալ բնական սեղմված գազի վաճառքի թույլտվություն 01.04.2020թ.-01.07.2020թ. ժամանակահատվածի համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20<u>20</u> թ. <u>04</u> <u>07</u>
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 120

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշում եմ.

1. Գյուլագարակ համայնքի ավագանու 2020թ ապրիլի 10-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գյուլագարակ համայնքի 2019 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին:
3. Գյուլագարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
4.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցօգնություն տրամադրելու մասին:
5. Գյուլագարակ համայնքի ամենամյա գույքագրման փաստաթղթերում փոփոխություն կատարելու մասին:
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին:
7. Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի վարչական տարածքում գտնվող, 06-027-0069-0006 ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին:
8. Գյուլագարակ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կազմերը փոփոխելու մասին:
9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերը փոխանակելու մասին:
10. Համայնքի սեփականություն հանդիսացող 06-093-0116-0001 ծածկագրից առանձնացված 3,0105 հա հողամասը վարձակալության տալու մասին:
11. Համայնքային սեփականություն հանդիսացող 06-057-0073-0001 ծածկագրով հողամասը օտարելու մասին:
12. Համայնքային սեփականություն հանդիսացող 06-027-0071-0005 ծածկագրով հողամասը օտարելու մասին:
13. Ընթացիկ հարցեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՐԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 20 թ. 04 08
գ.Գյուլագարակ